«ԶԱՆԳԵԶՈՒՐ»

ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԲՀՊՏ ԱՆՑԱԳՐԵՐ
- ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԱՀԵՏՆԵՐ
- ՎՐԱՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ
- ԱՐՇԱՎԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁՈՒՅԹ
- ԱՐՇԱՎՆԵՐ ԵՒ ՈՒՂԵԿՑՈՒԹՅՈՒՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ ՍՏԵՂԾՎԵԼ Է 2013 ԹՎԱԿԱՆԻՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆՈՒԹՅԱՆ 7 ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ, ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ, ԷՆԴԵՄԻԿ, ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ, ՀՀ ԿԱՐՄԻՐ ԳՐՔԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ, ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԷԿՈԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ։

1 Շիկահող պետական արգելոց

2 Արևիք ազգային պարկ

3 Սև լիճ արգելավայր

4 Զանգեզուր արգելավայր

5 Խուստուփ արգելավայր

6 Բողաքար արգելավայր

7 Սոսու պուրակ արգելավայր

ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, Մելիք Ստեփանյան 42/27

+374 60 750 057

zangezursnco@env.am

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ/ ՄՈՒՏՔԱՎՃԱՐ և ԱՆՑԱԳՐԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի կողմից կառավարվում են «Ծիկահող» պետական արգելոցը, «Արևիք» ազգային պարկը, «Զանգեզուր», «Խուստուփ», «Սոսու պուրակ», «Բողաքար» և «Սև լիճ» արգելավայրերը: Այս տարածքներում են գտնվում Ծաղկարի, Կապուտան լճերը, Լիճքի և Սրտերի ջրվեժները, Զանգեզուրի լեռները և այլն:

ՀՀ քաղաքացիների համար սահմանված վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ, օտարերկրյա քաղաքացիների համար՝ 2000 ՀՀ դրամ:

Տարածք մուտք գործել բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարը մուծելուց և անցագիրը ստանալուց հետո:

ԱՆՑԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

- Անցագիրը տրվում է բացառապես սահմանված մուտքավճարի կատարումից հետո՝ ներկայացված անդորրագրի և վճարողի անձը հաստատող փաստաթղթի հիմքով։

- Վճարները կատարվում են անկանխիկ տարբերակով՝ ՊՈԱԿ-ի գրասենյակում, կամ կազմակերպության հաշվեհամարին։

- Մինչև նախատեսվող այցելությունը կապ հաստատել ՊՈԱԿ-ի հետ և հաղորդել անցագրի լրացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ այցելության վայր, այցի ժամանակահատված, նպատակը, խմբի պատասխանատու անձ (ուղեկցորդ), պատասխանատու անձի անձը հաստատող փաստաթղթի լուսանկար, կազմակերպության անվանում (եթե առկա է), խմբի անդամների քանակը, տրանսպորտային միջոցներ, հավելյալ տեղեկատվություն։

- Մուտքավճարները սահմանված կարգով կատարելու դեպքում ՊՈԱԿ-ի կողմից տրվում է անցագիր։ Անցագրերի տրամադրումն իրականացվում է երկուշաբթիից ուրբաթ, 09։00-18։00 ժամանակահատվածում։ Շաբաթ և կիրակի օրերին այցելությունների դեպքում անհրաժեշտ է նախօրոք ձեռք բերել անցագիր։

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԱՀԵՏՆԵՐ

«ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐ



ԱՐԱՀԵՏԸ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՑ ԵՒ ՀԱՍՆՈՒՄ «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԸ, ՈՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՍՈՍՈՒ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՊՈՒՐԱԿԸ: ԱՅՆ ՍՏԵՂԾՎԵԼ Է 1958 ԹՎԱԿԱՆԻՆ՝ ՀՀ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՍՈՍԻ ԾԱՌԱՏԵՍԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ: ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ 17 ՏԵՍԱԿ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ:

«ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԶԱՐԴՆ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԴԱՐԱՎՈՐ ՍՈՍԻՆ, ՈՐԻ ՓՉԱԿՈՒՄ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԱՎՈՐՎՈՒՄ Է 20- 25 ՄԱՐԴ: ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ՏՆԿԱՐԱՆ՝ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՍՈՍՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՐՏԵՂ ԱՃԵՑՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ ԱՅԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ:



ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԱՀԵՏՆԵՐ

«ԱՐԵԻԻՔ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ



«Արևիք» ազգային պարկի տարածքի այցեքարտերից են Զվարագետի/ Լիճքի ջրվեժները, որոնց թիվը շուրջ 2 տասնյակի է հասնում, սակայն հասանելի ջրվեժները չորսն են: Արահետը մեկնարկում է «Արևիք» վրանային ճամբարի տարածքից, միջին բարդության է: Ընդհանուր երկարությունը մոտ 4 կմ է:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիրի կողմից կազմակերպվում է նաև Կապանից ազգային պարկ տեղափոխումը և ուղեկցությունը: Այցելության լավագույն ժամանակահատվածն է համարվում մարտի վերջից հոկտեմբեր ամիսները:

ՍՐՏԵՐԻ ՋՐՎԵԺ

«Արևիք» ազգային պարկի տարածքում գտնվող Սրտերի ջրվեժը խոշորագույնն է, և հանդիսանում է Հայաստանի ամենագեղեցիկ ջրվեժներից մեկը: Գտնվում է Մեղրի գետի վրա՝ Լիճք գյուղից 5 կմ դեպի հյուսիս և ճանապարհի կեսն անցնում է անտառի միջով: Արահետն անցնում է գեղատեսիլ անտառի և ձորակի միջով, գետի ոչ առատ ժամանակահատվածում հնարավոր է ներքևից մոտենալ ջրվեժին, իսկ հակառակ դեպքում՝ դիտել այն բարձրունքից:

Արահետի մեկնարկային կետը «Արևիք» վրանային ճամբարն է, ընդհանուր երկարությունը մոտ 6 կմ է: Հաղթահարելու համար անհրաժեշտ է լինել լավ ֆիզիկական վիճակում, առավել բարդ է:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիրի կողմից կազմակերպվում է նաև Կապանից ազգային պարկ տեղափոխումը և ուղեկցությունը: Այցելության լավագույն ժամանակահատվածն է համարվում մայիսից հոկտեմբեր ամիսները:

ԾԱՂԿԱՐԻ/ ԾԱԿՔԱՐԻ ԼԻՃ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԱՀԵՏՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐ

Ծաղկարի լիճը գտնվում է Զանգեզուրի լեռների կատարային հատվածում, Քաջարան քաղաքից 8 կմ հարավ-արևմուտք, ծովի մակարդակից 3272 մ բարձրության վրա, մակերեսը 3 հա: Այն բնության ջրաերկրաբանական հուշարձան է:

Արահետի մեկնարկային կետը պայմանականորեն համարվում է Մեղրու լեռնանցքը, ընդհանուր երկարությունը ետվերադարձով 16 կմ է: Արշավի ընթացքում հաճախ հանդիպում են Բեզոարյան այծերի առանձնյակներ:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիրի կողմից կազմակերպվում է նաև Կապանից դեպի Ծաղկարի լիճ տեղափոխումը /ջիփինգ/ և ուղեկցությունը:

ԿԱՊՈՒՏԱՆ/ ԳՈԳԻ ԼԻՃ

Զանգեզուրի լեռնաշղթայի ամենամեծ սառցադաշտային ծագում ունեցող Կապուտան/Գոգի լիճն է: Հայաստանի ամենախոր լճերից մեկն է, առավելագույն խորությունը 22 մետր է, մակերեսը՝ 10 հա: Լճից սկիզբ է առնում Քաջարանց գետակը: Ջրի մաքրության և պարզության շնորհիվ հնարավոր է մինչև 3 մետր խորությամբ տեսնել լճի հատակը: Լիճը գրանցված է Հայաստանի Հանրապետության պետական հուշարձանների ցանկում, որպես ջրաբանական հուշարձան: Քայլարշավի երկարությունը մոտ 2 կմ է: «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի կողմից կազմակերպվում է նաև Կապանից դեպի Կապուտան լիճ տեղափոխումը /ջիփինգ/ և ուղեկցությունը:

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԱՀԵՏՆԵՐ

«ՇԻԿԱՀՈՂ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ

ՔՍԱՋՈՒՐ

Քսաջուրը՝ 13-14-րդ դարերի կիսավեր, կոպտատաշ շարվածքով եկեղեցի է, որի ներսում կառուցված է փոքրիկ ջրավազան, իսկ եկեղեցու հիմքից բխում է հանքային աղբյուր, որի ջուրն՝ ըստ ավանդազրույցի, ունի բուժիչ հատկություն: Շրջակայքում կան հին բնակատեղիներ:

Արահետի մեկնարկային կետն է համարվում Ծավ գետի վրա գտնվող միաթռիչք միջնադարյան կամուրջը: Արահետը հարմար է գիտաճանաչողական արշավների կազմակերպման համար, ընդհանուր երկարությունը մոտ 3 կմ է: Արշավի ընթացքում կանցնեք ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների աճելավայրերով, հնարավոր է հանդիպել վայրի կենդանիների հետքերի: Արգելոցի տարածքում սահմանված է ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՂԵԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի մասնագետների կողմից: Հնարավոր է կազմակերպել նաև Կապանից դեպի Ծավ տեղափոխումը:

ԿԵՆՈՒ ՊՈՒՐԱԿ

Հատապտղային կենու (Taxus baccata) պուրակը արգելոցի հարստություններից է: Կենին Հայաստանում ներկայացված է ընդամենը մի քանի պոպուլյացիաներով: Այն երրորդական դարաշրջանի ռելիկտ է և շատ հազվագյուտ է Հայաստանի տարածքում:
Վտանգված տեսակ է, գրանցված է ՀՀ բույսերի կարմիր գրքում:

Արահետի մեկնարկային կետը Ծիկահող գյուղն է: Ընդհանուր արահետի երկարությունը 7 կմ է, միջին բարդության է: Մինչ կենու պուրակին հասնելը կտեսնենք արգելոցի խորքում թաքնված ջրվեժը: Արշավի ընթացքում կանցնեք ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների աճելավայրերով, հնարավոր է հանդիպել վայրի կենդանիների հետքերի:
Արգելոցի տարածքում սահմանված է ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՂԵԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի մասնագետների կողմից: Հնարավոր է կազմակերպել նաև Կապանից դեպի Ծավ տեղափոխումը:



«ՋԱՆԳԵԶՈՒՐ»

ՎՐԱՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

Վրանային ճամբար- 1 անձի արժեքը 5000 ՀՀ դրամ, որի մեջ մտնում է՝

· Վրան,
· Քնապարկ,
· Վրանի տակդիր,
· Խոհանոց,
· Կրակարան,
· Սանհանգույց,
· Խարույկի գոտի,
· Սպորտային գոտի,
· Հանգստի գոտի,
· Գրադարան,
· Թեյի, սուրճի հյուրասիրություն,
· Կինոդիտում:

Վրանատեղի- 2000 ՀՀ դրամ

*Արժեքները ներառում են ԱԱՀ:

Արգելոցում պարտադիր ուղեկցություն /մինչև 5 անձ/ արժե 5000 ՀՀ դրամ
Արգելոցում պարտադիր ուղեկցություն/ 5 անձից ավելի/ արժե 10000 ՀՀ դրամ
ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՂԵԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԱՅԼ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ
Ուղեկցորդ- զբոսավար- 10000 ՀՀ դրամ
Ուղեկցորդ- զբոսավար լեռնագնացություններ- 20000 ՀՀ դրամ

ԱՐՇԱՎԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁՈՒՅԹ

2 ՏԵՂԱՆՈՑ ՎՐԱՆ	2000 ՀՀ ԴՐԱՄ
4 ՏԵՂԱՆՈՑ ՎՐԱՆ	4000 ՀՀ ԴՐԱՄ
ՔՆԱՊԱՐԿ	1000 ՀՀ ԴՐԱՄ
ՎՐԱՆԻ ՏԱԿԴԻՐ	500 ՀՀ ԴՐԱՄ